



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

13 հունիսի 2019թ. թիվ 407-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ ԵՎ ԱՌԱՎԵԼ ՀՐԴԵՀԱՎՏԱՆԳ  
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԱՆՏԱՌԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԲՈՒՍԱԾԱԾԿ  
ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՀՐԴԵՀՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ  
ՈՒ ԱՌԱՋԱՑԱԾ ՀՐԴԵՀՆԵՐԻ ՄԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 330-Ա ՈՐՈՇՈՒՄՆ  
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) Լոռու մարզի տարածքում հրդեհավտանգ և առավել հրդեհավտանգ ժամանակաշրջաններում անտառային և այլ բուսածածկ տարածքներում հնարավոր հրդեհների կանխարգելման ու առաջացած հրդեհների մարման կազմակերպման նպատակով, համաձայն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2014թ. մայիսի 27-ի թիվ 184-Ա որոշմամբ հաստատված «Արտակարգ իրավիճակներում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանի» 9-րդ հավելվածի, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ եմ.

1. Սահմանել, որ ՀՀ Լոռու մարզի անտառային և այլ բուսածածկ տարածքներում հրդեհավտանգ ժամանակաշրջանն ընդգրկում է ձյունածածկի վերացման պահից մինչև նոր ձյունածածկ գոյանալը, առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանը՝ հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը, իսկ բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակը հայտարարվում է ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից:

2. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության (այսուհետ՝ ԱԻՆ ՓԾ) Լոռու մարզային փրկարարական վարչության պետին՝

1) համակարգել մարզի անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքներում ընդգրկված ուժերի ու միջոցների գործողությունները.

2) ցուցաբերել մեթոդական և գործնական օգնություն համայնքներին՝ համայնքի բնակիչներից կամավոր հրշեջ ջոկատներ կազմավորելու և հազվեցնելու ուղղությամբ.

3) բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակի մասին իրագեկել մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման և մարզի ծառայությունների, անտառտնտեսությունների և տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին՝ նրանց կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու համար:

3. Առաջարկել համայնքների ղեկավարներին՝

1) ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության հետ համատեղ կազմակերպել համայնքի ջրամատակարարման համակարգի ցանցի վրա անհրաժեշտ հակահրդեհային ջրածորանների (հիդրանտների) կամ այդ նպատակի համար մոնտաժված լցավորող ծորակների տեղադրումը և շահագործումը,

2) հրդեհավտանգ և առավել հրդեհավտանգ ժամանակաշրջաններում տանել բացատրական աշխատանքներ համայնքի բնակչության շրջանում՝ անտառային և այլ բուսածածկ տարածքներում հրդեհային անվտանգության կանոնների պահպանման ուղղությամբ,

3) բացառել համայնքի բնակչության կողմից համայնքային, գյուղատնտեսական, անտառամերձ ու անտառային տարածքների հողերում խոզանների, բուսական մնացորդներով ու չորացած բուսականությամբ տարածքների, արտավայրերի ու խոտհարքների բուսականության այրումը,

4) համայնքի բնակիչներից կազմավորել կամավոր հրշեջ ջոկատներ և մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչություն ներկայացնել այդ ջոկատների անձնակազմի ճշգրտված տվյալները,

5) առավել հրդեհավտանգ ժամանակաշրջանում և բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակում համայնքի առավել հրդեհավտանգ տեղամասերում անհրաժեշտության դեպքում սահմանել մշտական հսկողություն և հերթապահություն,

6) կազմակերպել համայնքի անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքները, աջակցել հրշեջ-փրկարարական ջոկատներին ու անտառտնտեսության աշխատակիցներին՝ անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքներում:

4. Առաջարկել «Հայաստան» ՊՈԱԿ-ի Գուգարքի, Եղեգնուտի, Լավարի, Ջիլիզայի, Դսեղի, Ստեփանավանի և Տաշիրի անտառտնտեսությունների տնօրեններին՝

1) ապահովել ՀՀ կառավարության 1998 թվականի սեպտեմբերի 19-ի «ՀՀ անտառներում հրդեհային անվտանգության կանոնները հաստատելու մասին» №589 որոշման հավելվածի 11-րդ կետում նշված պարտավորությունների իրականացումը,

2) անտառային և այլ բուսածածկ տարածքներում հայտնաբերված հրդեհների, դրանց պատճառած վնասների վերաբերյալ անմիջապես տեղյակ պահել ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության 911 ծառայությանը, ինչպես նաև անմիջապես արձագանքել 911 ծառայությունից ստացված ահազանգերին:

5. ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության պետին՝

1) աջակցել անտառային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների պատճառների, ինչպես նաև մեղավոր անձանց հայտնաբերման (եթե կան այդպիսիք) և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու աշխատանքներին,

2) աջակցել անտատային և այլ բուսածածկ տարածքներում առաջացած հրդեհների մարման աշխատանքներին, անհրաժեշտության դեպքում՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության առաջարկությամբ առավել վտանգավոր հատվածներում սահմանել հերթապահություն, իրականացնել քնակչության իրազեկման և տարահանման միջոցառումներ:

6. ՀՀ Լոռու մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետին՝ ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչությունից բարձր կարգի հրդեհավտանգ իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունն ստանալուց հետո ժամանակին նախազգուշացնել և ապահովել հավաստի ու օպերատիվ տեղեկատվությամբ մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին:

7. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2017 թվականի սեպտեմբերի 6-ի թիվ 330-Ա որոշումը:

8. Սույն որոշման կատարման նկատմամբ հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. հունիսի 13  
ք.Վանաձոր